

ւոր է մարմնոյ մեծ արագութեամբ, և
մասնաւորապէս հեծելութեան մէջ, և
ասոր համար է որ վալենցյացիք՝ ինչ-
պէս նաև Անտալուսիացիք սպանիական

ՄԻՍ ՃԷՆՆԻ ԿԱՊԻԿԸ

Պէնկալա ծոցին արեւելեան կողմը
ընկնող Անտաման կղզեաց խումբը ՄԻՍ



ՄԻՍ ՃԷՆՆԻ ԿԱՊԻԿԸ

հեծելադնդին զօրաւոր և համբաւաւոր
մասը կը կազմեն :

կը շարունակուի :

Ճէննի կապկին և իւր ցեղին հայրենիքն
է. և մեր առաջիկայ պատկերը կը ներկա-
յացունէ նոյն ցեղ կապկին առաջին ան-
գամ Եւրոպա բերուած մէկ օրինակը :

Այս կապիկը, որ հիմա լոնտուա է, Պրաւն նաւապետը ընծայեց նոյն քաղ-քին կենդանաբանական ընկերութիւն, զոր իր նաւաստիները ձեռք բերած էին Անտաման կղզեաց մէջ: Քաջութեամբ դիմացաւ Միա ճէննին Եթովպիոյ պա-տերազմին ամեն վտանգաց, և իր խա-ղերովն ու զուարթ բնութեամբը, բոլոր նաւաստեաց ուրախութիւն էր. որուն փորձը կու տայ հիմա նաև վերոյիշեալ լոնտուայի կենդանաբանական պարտի-զին մէջ:

Միա ճէննին կը բանայ յաջողութիւն Սէյց ըստած ջրոյն շիշերուն խիցը, և նստած ու շիշը ձեռքը՝ կը խմէ: Ախոր-ժանօք կը ծխէ, ինչպէս կը տեսնուի մեր առաջիկայ պատկերին մէջ. և զոր երբեմն երբեմն կ'ընդհատէ իր ըմպելի-քէն քանի մը պուտ խմելու համար: Բնութեամբ ընկերութիւն սիրող է. ա-նոր համար պրաղադ մը միշտ իրեն ըն-կեր ունի: Ուղիղ վերջին երկու ոտից վրայ քալելը նախադաս կը համարի, և այնպէս քալելու ժամանակ սովորու-թիւն ունի պրաղադը միշտ իր բազկաց մէջ կրելու, ինչպէս կ'ընէ դայեակ մը:

Միա ճէննին հիմա տասներորդ տա-րին լմնցուցած պիտի ըլլայ. և երկու ոտ-նայափ ու չորս բթաչափ բարձրութիւն ունի: Այս տեսակը թէպէտ ուրիշ ցեղի կապկաց կը նմանի, բայց իր ճակտին վրայ Եւրոպացւոց V գրին ձևով բուսած մազերովն կը տարբերի անոնցմէ: Մա-զերը միւս տեսակ կապիկներուն մա-զերէն աւելի բարակ է, և մարմնոյն մէջտեղուանքը սաստիկ երկընցած:

Կը պատմեն թէ Անտաման կղզեաց տեղացի բնակիչքը գրեթէ բոլորովին վայրենի, ու բնութեամբ ապուշ ու վայրագ ըլլան. ուստի ուզելով զա-նոնք Միա ճէննինին հետ բաղդատել, զայս քան զանոնք լաւագոյն կը գըտ-նան, այսու որ Միա ճէննինին հեղ է և իրեն եղած քաղաքավարութեան շնորհ-քով կը համապատասխանէ:

Բարոյական և քաղաքական տնտե-սութիւն:

(Տես էրէս 273.)

ԵՐԿՈՏԱՍՏԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆ

Իրաց ամէքը համեմատական է եղած ծառա-յութեան կարեւորութեանը

Ամէն մը 'ի վեր ամենուն ունեցած յոյսն սկսաւ արդիւնանալ. մայիս ա-միսն էր և բերքերուն երեւոյթը պահ-չելի. և նաև ցորենի գնոյն քիչ մը վար իջնալը Գաղղիոյ մէջ ապրիլէն 'ի վեր աւելի հաստատուն նշան մ'եղեր էր. ուստի վերջին տօնավաճառաց գնե-րուն համեմատ հացին գինը բովանդակ նահանգին մէջ զգալի նուազեր էր. ժո-ղովրդեան վիճակը սաստիկ ալէկոծու-թենէ ազատող նաւորդաց կը նմանէր, երբ վերջապէս հովը կը հանդարտի ու նաւահանգիստը կը տեսնեն ուր պիտի հանգչին:

Ամիսներէ 'ի վեր ամենուն ծախքը շատցած ըլլալով դեռ մեծ նեղութիւն պիտի քաշէին. բայց շատ տեսակ զորկ-մուկներ ունենալուն՝ բնականապէս պէտքերնին ամենամեծ էր. և մերձա-ւոր ժամանակներս լաւագոյն վիճակ մը ստանալու վստահութեամբ՝ ստիպեալ չէին ունեցածնին սաստկագոյն նեղու-թեան մէջ իյնալու վախով խնայելու. ապագային նկատմամբ ապահով ըլլա-լով՝ ապահով էին նաև ներկային հա-մար. ալ չէին տարակուսեր այնպիսի ծախքեր ընելու՝ որոնցմէ շատ ատենէ 'ի վեր կը զգուշանային, որոնք որչափ ուշ ձգուէին՝ այնչափ աւելի ստիպողա-կանք կ'ըլլային:

Ուստի ապրիլ ամսէն 'ի վեր մանրա-վաճառ տուրեւառութիւնն սկսեր էր քիչ մը գործունէութիւն ստանալ. զա-նազան գործատանց մէջ երկար ժամա-նակէ 'ի վեր դադրած աշխատութիւն-ներն հետզհետէ կը կենդանանային: